

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Դ Է Պ Ք

Բխանորի Գաղղիոյ կայսեր դասաձանկին դատաստանը : (Տես երես 174)

Ամբաստանութեան ատենական գրուածքը կարգացուեցնէ վերջը՝ գատաւորը կը սկսի հարցմունքներ ընել Բխանորեայ : — Ամբաստանեալ, գուն մեզի ըսիր որ ծնած քաղաքդ չես գիտեր . Ֆաէնցա չէ՞ քաղաքդ . — Այո , հոն բնակած եմ : — 1841ին՝ հռոմայեցի ապստամբ զօրքին մէջ կամաւոր զինուոր էիր , ինչպէս որ ինքիրենդ խոստովանեցար . — Այո : — Յայտնի է թէ այն զօրքը շատ գլուխներ ունէր . ասոնցմէ մէկը ճանչցար արգեօք . — Այո , Տէպորտաիս ըսուածը : — Ինչ աստիճան ունէր . — Հազարապետ էր : — Ուրիշ գլխաւորներ չես ունեցած . — Չէ : — Հազիւ թէ իմացուեցաւ որ սուտ անուն մը առերես ու Անտոն Լիվերանի կ'ըսուէր՝ Բիւմոնդ ծնած ձեռքընելով զքեզ , մէկէն վրագ տեղեկութիւններ առինք հռոմայ տերութեան մէջ եղած Գաղղիոյ պաշտօնարաններէն : Եւ իրօք արդարութեան պաշտօնեայն երկու պաշտօնական թուղթ առաւ , որ վրագ տեղեկութիւն կու տան . ահա ասոնք են . առաջինը մայիսի 2ին գրուած է . « ԅովհաննէս Բխանորի , որ Պրիձիկէլինոյ կ'ըսուէր , 32 տարուան է . կարգուած է , երկու տղայ ունի , արուեստով կոշկակար : Մարգասպանութիւն մը ընելուն պատճառաւ՝ թողուց իր երկիրը . բանտէն փախաւ . խռովարարներուն զօրքին մէջ մտած էր , ու 1849ին Գաղղիացոց գէմ պատերազմեցաւ : Ուրիշ նոր մարգասպանութիւններ ընելէն ետքը՝ Բխանորի ճեղովա գնաց ապաւինեցաւ , ու երբեմն երբեմն կը գաւնար իր երկիրը՝ նոր նոր անօրէնութիւններ գործելու համար » : Ամբաստանեալ , այդ պաշտօնական թղթոյն ԅովհաննէս Բխանորի ըսած մարդը դուն ես . — Բիւմոնդ չէ . — Այո , բայց ըսածները սուտ են : Ես այն ամէն յանցանքները չեմ ըրած : — Պրիձիկէլինոյ անունն ալ ունիս . — Այո : — Բայց այդ մականունանդ նշանակութիւնը աւելի պատճառ մը կու տայ հաւատալով՝ որ այդ ըսած տեղեկութիւնները ամենաճիշդ են , և թէ շատ մարգասպանութիւն ըրեր ես , և բաց անկից՝ բանտէն ալ փախեր ես . — Չէ , անանկ չէ : — Երկրորդ թղթին թուականը 5 մայիս է , ու առջինին պէս արդարութեան պաշտօնէին ուղղուած է . և ահա ասիկայ է . « Գործակատարը , և այլն . — Գործակատարը . Բխանորի մարգասպանութեան համար 12 տարի ցուկանաւի դատապարտուեցաւ » : — Բիւմոնդ չէ . — Անանկ չէ , ոչ երբեք դատապարտուած եմ : — Բայց ինչպէս կը տեսնաս՝ խաւրուած տեղեկութիւնը պաշտօնական է , և այս ալ կ'իմացնէ որ կրակ ձգելուց համար երկու անգամ դատապարտուեր ես . — Այս իրաւ է որ 1849ին փետրուարի մէջ բանտ գրուեցայ վեց ամսուան համար : — Ինչո՞ւ . — Չեմ գիտեր : — Ինչպէս . կը խոստովանիս որ վեց ամիս բանտ կեցեր ես ու ելեր կ'ըսես թէ չեմ գիտեր պատճառը . — Հռոմայ գործողութիւններուն մէջ մտնալուս համար : — Պաշտօնական թուղթերը կ'ըսեն թէ 1852ին ապրիլի 30ին ալ Չերվիա քա-

ղաքին բանտէն փախեր ես , և թէ սարսափելի մարգասպան մըն ես . — Անանկ չէ :

Ասկէց ետքը եղած հարցափորձէն յայտնի կը տեսնուի՝ ամբաստանութեան ատենական գրուածքին ըսածին համեմատ , որ ամբաստանեալը ճեղովա ապաւիններ էր , ետքը Բիւմոնդ , Պատրիա , Մարսիլիա գացեր է . անցագիր մը առած էր Լիվերանի անուամբ , որ իր քեռորդին էր : Բնակեցաւ Լիոն ու Շալոն քաղաքները և վերջապէս Բարիզ եկաւ , ուր 1852ին օգոստոսի մէջ հաստատուելու թուղթ մը խնդրեց՝ նոյնպէս Լիվերանի անուամբ : Բարիզ հինգ ամիս կենալէն ետքը՝ Լոնտրա գնաց , ուր կ'ըսէ թէ կօշկակարի մը քով կ'աշխատէր , որ շաբաթը 2 ու 1/2 ստեռլին վաստըլընել կու տար իրեն : — Գահէբէյը . Ըսենք թէ ընդունինք որ քու աշխատութեամբդ այսչափ բան կրնայիր վաստըլիլ . բայց ինչո՞ւ այն ատեն Լոնտրա չկեցար . — Վարպետս Ամերիկա գնաց . ու իմին ալ թէս ալ ցաւ մը ունէր , չէի կրնար այսպիսի խոնաւ երկիր մը կենալ : — Գահէբէյը ամբաստանելոյն կը հարցնէ թէ ինչ պատճառաւ էր որ Լոնտրայէն գաւնալէն ետքը՝ վրան փոփոխութիւն մը եղաւ , ինչպէս տեսան վկաները . ինչո՞ւ Անգլիա երթալէն առաջ ուրախ էր ու կ'աշխատէր , և երբոր դարձաւ՝ չէր խօսեր ու ալ ամենեւին չաշխատեցաւ . — Ահա՛ ասէալ . Ասիկայ իրաւ չէ : — Լոնտրա չհանգիպեցար անոնցմէ մէկ քանինին , որոնց զօրքին մէջ հռոմ պատերազմեցար . — Չէ :

Գահէբէյը հոս ամբաստանելոյն ուրիշ հարցմունքներ ընելէն ետքը այն օրերուն այլեայլ պարագաներուն վրայ , որ դաւաճանութեան փորձէն առաջ էին , կը հասնի նոյն իսկ այն գործողութեան շաբաթ օրը : — Առաւտըր գոնապա՛նին ասանկ ըսելով գուրս չէլար որ եթէ մարդուն մէկը զքեզ գտնելու գայ , ըսէ անոր որ չորսին կը դառնաս . — Մարդուն մէկը չըսի . թէ որ մէկը գայ՝ ըսի : — Ո՞վ պիտի գար . — Երկու լուացարար կնիկները , որ արդէն չորեքշաբթի օրը եկած էին : — Բայց մարդ չեկաւ տունդ . գուն մինակուկ վեր ելար , ու քիչ մը ատեն անցնելէն ետքը՝ նորէն վար իջար . ոգելից ըմպելիքներու խանութ մը մտար , որ ճիշդ բնակած պանդոկիդ տակն էր , ու հոն գաւաթ մը ափսինդ¹ բերել չտուիր . — Այո , անանկ է , իրեք փողի : — Եւ նշանական ձայնով մըն ալ ըսիր . « Աղէկ նայե որ լաւ ափսինդ ըլլայ » . — Չեմ գիտեր թէ արդեօք այս խօսքս ըսի : — Ետքը ո՞ր գացիր . — Բարիզ մէջ Ժուռ գալու : — Եւսէալ Դոյլեբը գացիր , ուրիշներուն պէս գուն ալ գիտնալով՝ որ կայարը իրիկուան 4էն ինչուան 6 անկից ձիով կ'անցնի՝ առանց զինուորական հետեակիցներու : Գարեջրոյ² խանութ մը չգացիր . — Գրեթէ՛ ամէն օր գարեջրուր խմելու համար կ'երթայի հոն : — Այն խանութէն խիստ շատ անգամ տեսած

չէն Կայսեր անցնիլը . — Թագուհին տեսեր եմ, բայց Կայսրը չէ : — Եւ 5 ու 1/2ին գէմ՝ երբոր Կայսրը կառաց ճամբէն անցաւ, դիմացը գացիր ու վրայէ վրայ երկու անգամ ատրճանակ չպարպեցիր . — Հիմա չեմ յիշեր թէ մէկ անգամ պարպեցի՞ չէ նէ երկու : — Գահէրէնը . Կը խոստովանի որ պարպեցիր . — Այո : — Պահապանին մէկը, որ ատրճանակը ձեռք առնելէ տեսեր էր, վրագ յարձակեցաւ, բայց քու ու անոր մէջէն կառք մը անցնելով՝ իր վագելը արգիլեց : Երբոր վրագ հոսաւ՝ երկու անգամ պարպած էիր, ու ձեռքդ մէկ եղբգով ատրճանակ մը չէիր բռնած, որ նորէն պարպել կ'ուզէիր . — Անանկ չէ . մարգը այն ատրճանակը գրպանիս մէջէն հանեց, գանակով ինձի երկու հարուած տալէն ետքը՝ մէկը կռակիս, մէկըն ալ թևիս : — Երկու եղբգով ատրճանակէն զատ, ու բայ ՚ի գրպանի ատրճանակ ըսուած երկրորդ ատրճանակէն, որուն համար պահապանը կ'ըսէ թէ ձեռքդ գտաւ, վրագ ուրիշ գրպանի ատրճանակ մըն ալ, գաշոյն մը ու շատ աղէկ սուր ամէլի մը ունէիր : Գու ըսածիդ վրայ կենալով՝ երկու եղբգով ատրճանակը Լոնտոն գնեցիր 150 Ֆրանգի . բայց քեզի պէս մարդ մը լոնչպէս կարելի է որ այսչափ ստակ ծախք ընէ ու այգպիսի փառաւոր զէնք մը գնէ . — Ես անոր համար գնեցի էի անիկայ, որ Բարիզ աւելի սուղի ծախեմ . . . առևտուր մը ընելու համար գնեցի էի : Ամբաստանուէր կը յայտնէ թէ ամենայն կերպով կը ճանչնայ այն զէնքերը, որ իր առջը բերին՝ ընդհանուր գործակալին ու գաղաւթներուն ցուցնելէն ետքը : — Գահէրէնը . Ըստոնցունէ ՚ի վեր էր որ այդ գաւառանութիւնը մտքիդ մէջ որոշեր էիր . — Չէ : — Բայց սակայն մենք նախադրածութիւնը բարոյական տեսութեամբն է որ կը մտածենք . վասն զի ըստ օրինաց, թէ որ մարդաստանութիւնն ընելու գիտաւորութիւնը՝ նոյն յանցանքը գործելու ժամանակն ալ ծնած ըլլայ մտքիդ մէջ, ՚ի վերայ այս ամենայնի յանցանքը կատարեալ է՝ Կայսեր վրայ գաւառանութեան փորձն ընելու վայրկեանէն սկսած : — Ամբաստանուէր կ'ըսէ թէ այն երկու գրպանի ատրճանակները վարձքի տեղ վճարեց իրեն ծառայ մը, որուն համար կոշիկ կարած էր : — Գաղաւթներն այս մեկնութիւնը կըռեն . ամբաստանութիւնը անանկ կ'ըսէ, որ այն զէնքերը քու քաղաքագէտ բարեկամներէդ աւիր՝ այդ իրենցմէ յանձնուած պաշտօնը կատարելու համար . — Անանկ չէ : — Այսպիսի փառաւոր զէնքեր ունենալէն զատ՝ բոլորովին նոր ու սպրկիկ զգեստներ հագուեր էիր, և գլխարկդ, որ հոն է, անգլիական կնիք մը ունի՝ քու յանցանքիդ պէս . մէջը ասանկ գրուած է . Բի-բէ-շ-պ-պ-պ . Ս-պ-է-ն-ի-ն : Ինչու պզտիկ գլխարկ մըն ալ գօտիէդ կախեր էիր կապով մը . — Չեմ գիտեր ինչու : — Ես այնչափ ստակ ծախք ընելէն ետքը՝ թէ զէնքի եղեր է և թէ զգեստի, վրագ 114 Ֆրանգ ունէիր . ու գէտ կեցեր կը պնդէս թէ այդ զգուցի ոճիւրդ գործելու համար ստակ չես առած . — Չէ : — Վերջին հարցմունք . Ինչ պատճառով գրգռուեցար այդ գաւառանութեան փորձն ընելու : — Ամբաստանուէր այդ հարցմունքին պատասխան՝ կը սկսի երկայն բարակ իր ընտանեաց վիճակին վրայ մանրամասնաբար խօսիլ : Ասանկ բան մը կ'ը-

սէ թէ ինքը անգամ մը յուսահատութենէն՝ դանակով իրեք անգամ պիտի զարնէր զինքը : Այդ պատասխանը մեծաւ մասամբ անհասկանալի էր, թէ Բիանորեայ անհանգարտ աշխուժութեամբ մը խօսելուն և թէ գաղղիարէն լեզուն քիչ գիտնարուն համար : Այդ իմաստները միայն կը հասկըցուին . Հռոմայ արշաւանքին համար, որ իմ երկրիս ու իմ գերդաստանիս կործանում բերաւ . . . Հռոմէն վախուցայ . . . Ըսի . Պիտի ընեմ . և ըրի :

Գահէրէնը . Կստէ : Վկայ մը ներս մտուցէր : — Մալէ կոչկակարը, որուն խանութը Բաստօ ֆէ Բաւերմա ըսուած փողոցն էր, կ'ըսէ թէ ինքը աշխատութիւն տուաւ Բիանորեայ, բայց ոչ ճիշդութեամբ և ոչ կարողածքին ամենեկին հաւանեցաւ : — Միշտէ պանդոկապան կինը, որ Բիկալ պաւլալը կը կենար, ասանկ կ'ըսէ . Բիանորի Անգլիա ճամբորդութիւն ընելէն առաջ՝ շատ աշխատասեր ու շատ ուրախ էր . բայց գառնալէն ետքը՝ բերանը լուռ էր ու ալ չէր աշխատեր : — Տիւրքն գռնապանը, որ նոյն փողոցին մէջ էր, նոյն վրայութիւնը կը հաստատէ : Մէկալ ամէն վկաները կը ամբաստանութեան ատենական գրուածքին մէջ գրուած բաները կը հաստատեն : — Ընդհանուր գործաւուր՝ Ալեսանարի անունով վկայն երթալու վրայ եղած ատենը, որ Բիանորին բռնող պահապանն էր, կը հարցնէ անոր . Ամբաստանեալ բռնելէդ ետքը՝ այս բառերը չսեղմիր . Մի մեռցնէր . — Այո, լսեցի : — Ո՛վ ըսաւ այն խօսքը . — Կարծեմ Կայսրը :

Ընդհանուր գործակալը ամբաստանութեմ վրայ պնդեց . Ըսմի փաստաբանն ալ ջատագովութիւն ըրաւ : Գաղաւթներուն տասուրիք վայրկեան մը խորհրդակցութիւն ընելէն ետքը՝ հաստատական հաւանութիւն մը տուաւ : Ընդհանուր գործակալը վրայ կոխեց որ Պատուհասագրոց 864 հատուածին ըսածը գործադրուի : Ատենը մամուլէն ետքը՝ այս հետեւեալ վճիռը տուաւ . “ Տեսնելով գաղաւթներուն փորձմունքը, ուսկից կ'իմացուի թէ Բիանորի յանցաւոր է որ Կայսեր կեանքին կամ անձին վրայ գաւառանութեան փորձ մը ըրաւ . Մտածելով որ այդ յանցանքը Պատուհասագրոց 864 հատուածէն սահմանուած է ու պատիժը որոշուած, և օրէնքը 1853ին յունիսի 10 ձգեց այս հատուածը, ասանկ ըսելով . “ Հապառմի . — 864 և 894 հատուածները այս հետեւեալ կերպով կարգաւորուեցան . Հատուած 864 . Կայսեր կեանքին կամ անձին գէմեղած գաւառանութեան փորձը՝ հայրասպանութեան պատժով պատժուի . . . Անոր համար ատենը կը գաղաւթարեմ զԲիանորի հայրասպաններու պատժին ու գաղաւթներին ծախքը վճարելու : Եւ վճիռը կատարելու հոգը ընդհանուր գործակալին վրայ ըլլայ . . . ”

Գահէրէնը . Ամբաստանեալ, գէտ իրեք օր ունիս գիմելու՝ որ հիմակուան լած վճիռդ վերցուի : — Ետքը ատենը կը լուծուի :